ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 ըրլ.ռս. թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։

Բաժնեգիները կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով· M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ձ ՏԱՐԻ ԹԻԻ 78

1891 ՅՈՒՆԻՍ 3

ՄԱՅԻՍ 22 (Հ. Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԱՑԻ

ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Դ. ԱՇԲԹ. օրեր

ԳՈՅՔԱԳՆԱՏՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։

Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 մէջք գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑՈՑ

ՀԱՑԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Քաղուած կանոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգութիւններ մտցունելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է քաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին ոյժ գոյացունել Ազգին մէջ իւր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բացի զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբեր Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։*

Տանօր. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցել կամ թղթակիցել ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian

(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպատէ Արմենիա լրագրի հրատարակման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փափազեան Մեսրոպ վարդապետի սպանումը.—4000 ամեակը.—Տեղական.—Աւստրալիա եւ Աւստրալիոյ Հայերը.—Թիւրքիահայ լուրեր,—Ռուսիա եւ Բ. Դուռը.—Արտասահմանի լուրեր.—Մանուկցումներ.—Բանասիրական (Ռոդեւորութիւն ի Պարսկաստան)։

ՓԱՓԱԶԵԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՊԱՆՆՈՒԻԼԸ

Արմենիայի վերջընթեր թուով հրատարակած էինք Թիֆլիսէն մայիս 19ին ֆրանսական լրագիրներուն տրուած այն հեռագիրը թէ կաթոլիկ Հայերն Սրապիոն վարդապետի սպանման վրէժը լուծելու համար սպաննեցին Փափազեան Աբժ. Մեսրոպ վարդապետը։

Թիֆլիսի Մշակ լրագրի մայիս 7/19ի թուին մէջ ալ կը տեսնենք հետեւեալ հեռագիրը որ Պարսկաստանի Դավրէժ քաղաքէն ղրկուած է Մշակի խմբագրութեան. «Մայիսի 3(15)ին, գիշերը, 5 հոգի կաթոլիկ Հայորինեց, Թաւրիզից ոչ հեռու գտնուող մի տեղում սպաննեցին Մեսրոպ վարդապետ Փափազեանին և նրա ծառային։»

Սրապիոն վարդապետին Հայերէ սպաննուած լինելու կասկածին բոլորովին սուտ և անհիմ լինելը հաստատուած է արդէն դատաստանական քրն.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Շար. 77ղ թուհ)

Ձմեռուն վրայ ոչ մի տեղ անտառի չենք հանդիպիլը. չոլակայքը բարձրացած են նոյնպէս լերկ սարեր որոնց միայն հիւսիսային երեսը հողային ջերտով մը ծածկուած է և մարգագետիններ կը կազմէ. իսկ հարաւային երեսէն որ ոչ մի ծառաբոյսով պաշտպանուած է՝ ձմեռ եկած և գարնան չուտով հալած ձիւնը հեղեղներ կազմելով բոլոր հողը տեղափոխած է դէպի դաշտը և լեռների քարային խաւերը այդպիսով իրենց մերկութեամբ տխուր կերպարանք մը կուտան երկրին։

Մակուի խանութեան սահմաններին մէջ ենք տակաւին. այս գաւառի, ինչպէս նաեւ բոլոր Պարսկաստանի մէջ, ոչ մի տեղ գիւղացի երկրագործը սեփական հող ունի (աննշան բացառութեամբ)։ Հողերը կը պատկանին մի մասը պետութեան և մեծ մասն ալ աւատատէրերու։ Վերին ասիճան խեղճութեան մէջ ընկած գիւղացի ազգաբնակութիւն մ'է երկրին երեսը մեքենայէս մշակողը և այդ վիճակին համակերպելէ զատ ոչ մի միջոց ունի, դա իրեն բնական նախասահմանած վիճակ մը կը նկատէ, որմէ դուրս ելնելու ձգտումէ երբէք չկայ իր մէջ։

Մակուի այժմեան իշխան Թէմուր խան այդ սահմանագլխի գաւառին մէջ գրեթէ ինքնիշխան կառավարութիւն մ'ալ դործ կը դնէ, ինչ որքան դիւանագիտական վարմունք և պարսկական խորագիտութիւն ցոյց կուտայ ուսս և թիւրք սահմանակից իշխանութիւնների հետ ունեցած յաճախակի յարաբերութեանց մէջ և կամ պարսիկ կեդրոնական կառավարութեան հետ ունեցած գործերի մէջ, նոյնքան ալ լաւ պատերազմողի համբաւ ունի. Ճկլալի քիւրդ ցեղը այս խանութեան մէջ տարածուած է և 5000 վրան կը հաշուուի. ադոնք ինչպէս և գաւառին ուրիշ Քիւրդեր և Թիւրքեր իր կառավարութեան տակ աւելի սանձուած են քան Թիւրքիոյ ուէ դաւառի մէջ։ Շահը զինք հրաւիրեց 1880ին, որ իր զօրքով օգնութեան հասնի պարսիկ բուն բանակին՝ Եէյլա Ուպէյտուլլահի արշաւանքին դէմ։ Թէյմուր այդ կռուէն, ինչպէս կըսուի, 2000էն աւելի քիւրդ գլուխներ գետին ձգելով, դուրս ելեր է յաղթական։ Մակուն իր հողերով, իր վաճառականութիւնով և բնակիչներով ամբողջովին այս խանին և իր ազգականներին կը վերաբերի։ Ոչ մի փոստային հաղորդակցութիւն կայ այս գաւառի և պարսկական միւս գաւառների մէջ։ Այս գաւառը ուր 5րդ դարի մէջ 60,000 հայ կտրիճներ հայրենիքի և կրօնի պատերազմ մղեցին, այսօր Հայերէ ամայացած է. իրենցմէ աւելի սուր, աւելի ծոյլ և անգործ ժողովուրդներ և ցեղեր — Թաթարներ, Քիւրդեր, Թիւրքեր, զիրենք փոխարինելով, երկիրը կէս անապատի մը վերածեր են։

Արտաք գաւառի կողերէն քերելով կանցնինք, մի քանի ժամէն ետք Ցմուտ գետին ափը կը հասնինք որ ընդարձակ ճախիններ կազմեր է իր շուրջ։ Գետը շատ ցամքեր է։ Իր աւազուտ լայն յատակ միայն տեղ տեղ ջրերէ կը թացուի այժմ, այս ամառ եղանակին։ Պիտի մտնորուէինք ճախինների մէջ, եթէ ձիերը իրենց բնազդումին չձգէինք որոնք ինքնին աւելի հաստատուն հողեր գտնելով, մեզ չոր ճամբուն վրայ հանեցին։ Իրիկունը շատ գէշ իջեւանի մը մէջ անցուցինք, Կամչկան անուն թրքաբնակ մի գեղ. խմելու ջուր չգտնուիր գիւղացիներն իրենց գործածած ջուրն ախոռին անմիջապէս քով երեք կանգուն փորուած մի ջրհորէ կը հանէին. ախոռին բոլոր աղտոտութիւններ հողէն ծծուելով և ջրին հետ խառնուելով օշարակի գոյն մը տուած էին անոր. միայն գանելով կրնայինք

նիւթերով. իսկ եթէ իրաւ է որ կրօնական մոլեռանդութիւնը այնչափ զօրացած է այդ կողմերի կաթոլիկներին մէջ (Ասորի ինչպէս հեռագրած են Մշակին կամ Հայ ինչպէս հեռագրած են Ֆրանսայի լրագիրներուն) որին հաւատալ չենք սիրեր, այդ շատ ցաւալի կացութիւն է։ Միթէ չկան Պարսկաստանի մէջ բաւական զարգացած մըտքով երիտասարդներ որ հասկացնեն ժողովրդին թէ միջնադարեան կրօնամոլութեան գաղափարներ՝ որոնք հաւատաքննութեան առեանները և խարոյկները հաստատեցին, ծիր դարի վերջերն ցոյց տալը ժամանակագրական մի մեծ սխալ է և անպատուութիւն կը բերէ մի ժողովրդի որ քաղաքակրթ աշխարհին մէջ կուզէ երեւիլ։ Կրօնը խղճի խնդիր է որ չկրնար բռնաբարուիլ։ Թո՛ղ ամեն մարդ իր կրօնը պահէ, առանց իր ընկերոջ խղճին դիպչելու և ամենքը միասին խորհին իրենց տղդի և իրենց երկրի ընդհանրական շահերին համար։ Միթէ Ասորիներին, ինչ դաւանութեան ալ որ պատկանին, Հայերին հետ իրրեւ բարեկամ և հաւասարվարուիլը՝ պակա՞ս օգուտ կը բերէ երկու կողմին ալ։ Եթէ ճիշդ են վերոյգրեալ հեռագիրները, և դժբաղդաբար ճիշդ կերեւի Մեսրոպ վարդապետի սպանումը, շատ ցաւալի է որ կաթոլիկ եկեղեցականների մոլեռանդութիւնը յաջողած է այդպէս աստելութեան սերմեր ցանել կաթոլիկ Ասորիներին և լուսաւորչական Հայերին մէջ։

Սպանուած Մեսրոպ վարդապետը Վանեցի էր, երբեմն ուսուցչական պաշտօն վարած Դավրէժի մէջ, վերջերս վանահայր էր Վանի մօտակայքը Ալճավազի վանքին. իսկ այժմ 6 ամսի չափ կայ որ Պարսկաստան անցած էր։ Իր քահանայութեան ժամանակէն ունեցած է մի քանի զաւակներ որոնց մին՝ Պր. Վրթանէս Փափազեան, յայտնի է արդէն Թիֆլիսի Մշակին, Տարագին և Մուրճին մէջ իր գրած վէպիկներով, պատկերներով և այլ հետաքրքրական յօդուածներով։ Քիչ յառաջ հրատարակեցինք նաեւ Արմենիայի մէջ իր գրած «Թամամ Բոցարիս» փոքրիկ վէպը յոյն դիւցազների կեանքէն։

Մեր խորին ցաւակցութեան զգացումներն հրապարակով կը յայտնենք հանգուցեալ Մեսրոպ վարդապետի որդիներին և ազգականներին։

4000 ԱՄԵԱԿԸ

Հայ ազգի 4000 ամեակի նկատմամբ չահագրգռուողներ շատ շատ կը լինեն

և Թերեւս նոյնքան, որքան այդ լուրը լսելու ականջներ ունեցողներ կան. անհատները ծօնում են հնգամեակները, տասնամեակները, որչա՞փ առաւել ազգի իւր 4000ամեակը։ Բայց ցաւալի է որ այդ բազմաթիւ չահագրգռուողների մէջ կան և այնպիսիները, որոնք ազգի անցեալը գիտենալու համար «պատմութեան հնագոյն երեսները պըրպտելը» Է. Ալիշանի բանաստեղծութիւնք կարդալն են համարում։ Դիցուք թէ Ն. Ք. 2492 թուին հանդիպումն մի եղած է ինչ ինչ թուականների. միթէ՞ այդ ապացուցում է որ Հայկն իսկ այդ թուականները միեւնոյն օրը հաստատել է։ Եւ կամ ո՞ւսոի գիտենք թէ Հայք այդպիսի թուականք են անընդհատապէս ունեցել։ Պր. *** կարող է կարդալ Խորենացու պատմածն՝ «կարգք և սովորութիւնք դեղեցիկք հաստատեցան ի Վաղարշակայ և յայլոց առաջնոց թագաւորացն, այլ ի մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և ասպատակաց պարապեալք. և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. ղաբաթուց ասեմ և զամսոց և դոարեաց բոլորմանց։ . . . Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի։ (Գիրք Բ Գլ. 59)։

Հարկաւ առաջ եւս ունեցել են Հայք որեւէ թուականի, եթէ հետեւինք գիտնականաց ումանց կարծեաց, և գուցէ թէ նոյնն եղած լինի և Պարսից մէջ. սակայն նախ քան այդ ժամանակներն ոչինչ տեղեկութիւն ունինք։

Եթէ Հայոց թագաւորաց սեպագրութիւնք անգամ մի կարդացուին, անշուշտ շատ մթին կէտեր պիտի լուսաբանուին. մինչև այժմ կարդացուած են ասորա-բաբելական սեպագրութիւնք։ Անկէ գիտենք որ Քրիստոսից 1000 տարի առաջ Արարատեան թագաւորութիւնը շատ հզօր էր և այն. քան հզօր որ շարունակաբար պատերազմում էր Բաբելացւոց դէմ։ Ճշդիւ

նայել թէ մեր ուղեկից Թիւրքերը ինչպէս փիլիսոփայօրէն կը վայելէին այդ ջրէն։ Մեզ հիւրընկալեցին նկուղի մը մէջ ուր կիսամերկ Թրքուհիներ ալ քիչ քիչ առանց քաշուելու սկսան մօտենալ՝ մի քանի հաւկիթ, քիչ մը կաթ ծախելու համար. ողորմելի էր Թրքուհին իր այդ վիճակի մէջ. միայն մինչեւ ծնկները հասնող պատառատուն ձորձ մ'ունէր իր չապիկ ծառայող, լաչակ մ'ալ գլուխին անցուցած. այդ էր իր բոլոր հագուստը։ Բայց հակառակ իրենց կեղտոտ հագուստին և վիճակին, Թիւրքն և Թրքուհին ալ մենէ կը գարշէին։ Իրենք իրենց Շիա իսլամներ հաւատամ կը սեպեն ամեն մի քրիստոնեայ. ինչպէս կերեւի ազգովը փիլիսոփայական այն բարձրութեան հասած են որ միայն մարդու ներքին հոգեկան մաքրութիւնը գնահատեն. իրենց աչքին մենք անսուրբ և զզուելի մարդիկ էինք ուրեմն, ինչքան ալ արտաքին խնամքներուն և մաքրութեան հոգ տանէինք. իսլամի օրէնքն միայն կրնար մեզ սրբել։ Այս խարութիւն գժուարութիւններ կը պատճառէ Պարսկաստանի մէջ օտարականն ճամբորդին. նա ձեռք չկրնար երբեք յուսացունել Թիւրքի կարասիներին, առանց զանոնք պղծելու, իր յատուկ ամաններ

չգիտեն նոցա յաղթութիւնք վասն զի սեպագրողք Բաբելացիք էին և Ասորիք, որոնք հարկաւ միայն իւրեանց յաղթութիւնք կը գրէին և ոչ թէ պարտութիւնը. բայց և այնպէս Հայոց թագաւորաց անընդհատ պատերազմելը ցոյց է տալիս որ չեն յաղթուել։ Այդ սեպագրաց մէջ Հայոց թագաւորք այլ անուններով են յիշուում, որպէս օտարաց մէջ սովորական էր. Հայոց մայրաքաղաքն կամ գուցէ սահմանապահ բերդն է Վարագայ լերան տոտրոտում, Տոսպ գաւառի մէջ, որ գուցէ մի ժամանակ վերստին իւր փայլն ըստանայ։

Այս ժամանակից առաջ պատմական որոշ թուեր չունենք։ Աղէքսանդրիացին յիշում է (Եւսեբիոս, Պատրաստ. ուետ. Բ, 5) որ Հայք յարձակեալ են Փիւնիկեցւոց վրայ և Աբրահամի քեռորդին գերի տարել։ Սակայն ե՞րբ է եղել Աբրահամ, թէ՛ սա և թէ՛ Նեբրովթ անորոշ են ըստ ոմանց. այսու ամենայնիւ հետեւելով գիտնականաց թուահաշիւներին, դոքա Քրիստոսից 2000 տարի առաջ են եղած։ Նեբրովթ թիւն է 2100 տարի Քրիստոսից առաջ. ուրեմն Հայկ եւս նոյն ժամանակն է եղած։ Այս չի նշանակում որ նախ քան այդ ժամանակն խառն է եղել կամ Հայք չեն եղել. Հայք թերեւս նոյնքան հին են, որքան և Բաբելացիք, միայն թէ չուրջ 2007 թուին Հայկը իւր ժողովրդի ազատութիւն տուաւ. այդ թուականն է դնում նաև Մէն-Մարդէն Հռչակաւոր Ֆրանսիացի գիտնականն իւր Mémoires sur l'Arménie գրուածքում. այդ գիտնականի հետազօտութիւնն ի հարկէ բաւ է հաստատութեան համար, մանաւանդ որ Նեբրովթի թուականն եւս այդ ժամանակ են դնում հին գիտնականները, եթէ չեմ սխալւում, մօտաւորապէս դոյն թուականն է գործածուած իրըև Հայոց թուական, որբագործուելով Մ. Էվփածնի Օրացոյցի վրայ. վասնորոյ այդ թուականն սուրբ է և պէտք է

պէտք է ունենայ Ջուրի և կերակուրի. ձեռքը դպցուցած նպարեղէնը պէտք է որ գնէ, որովհետեւ այդ նպարը այլ եւս հարամ է միւսլիմանի համար։ Աստպատականի Թիւրքն ի բաց առեալ գլխաւոր քաղաքների մէջ գտնուող մաքրատէր Պարսիկները, այնչափ առաջ կերթայ կրօնական տեսութեամբ միայն մաքուրն և անմաքուրն որոշելուն մէջ, որ մարմնի, հագուստի, տան և անունդի մաքրութիւնը իրեն համար անծանօթ ձեացած մի բան է և զարմանք չէ տեսնել թէ Ասիայի այս մասին մէջ ոչ մի տեղ այնքան կեղտոտութիւն չարիներ որքան Կովկասի և Աստպատականի Թիւրք գեղերին մէջ։ Կերեւի թէ ջուրը աւելի անհնամ վիճակի մէջ ձգուած է այն պատճառով որ իրենց համար կրօնական դաւանանքի մը պէս եղած է այն կարծիք թէ աւելի ջուր որ չարժուն է՝ սուրբ է. այդ հաստատով նոքա ախորժով կը խմեն մեռնոյն ջուրէն որի մէջ լուացքնին կանեն, բաւական է որ այդ ջուրը կը հոսի, թո՛ղ մինչեւ իսկ այնքան տկար լինի նորա ընթացք որ յարդի չիւղ մը հազիւ կարենայ գլորցունել։

(Շարունակելի)

* * *

տօնել Հայ ազգի 4000ամեակը։

Բայց աւելին եւս. չուրջ 2500 տարի առաջ Հայք օծեցին իւրեանց առաջին պսակադիր թագաւոր Պարոյրին, այն է Քրիստոսից 606 տարի առաջ, երբ Աստրեստանի թագաւորութիւնը Մարդանապալի անկմամբ խորտակուեցաւ (1)։

Հայկազեան թագաւորութիւնն եթէ ընդհատուեցաւ մի քիչ, բայց չուտով նորան հետեւեցաւ Արշակունեաց հարստութիւնը։ Արշակունիք անկան և գրեթէ 5 դար յետոյ կանգնեցաւ Բագրատունեաց հզօր պետութիւնն, որի շարունակութիւնը կամ ճիւղաւորդն էր Ռուբինեան թագաւորութիւնն։

Արդ, Հայոց վերջին թագաւորն Լեւոն Զ մեռաւ 1393 թուին. ըստ որում 2 տարուց յետոյ լրանում է Հայոց ազգի սուգին հինգարիւրամեակն, ճիշդ այնպէս, ինչպէս Արշակունեաց թագաւորութիւնից յետոյ Բագրատունին Աշոտ չըսպասեց սուգի հինգարիւրամեակի լրանալուն և իւր պետութիւնը կանգնեց։

Աւասիկ, մեզ համար այս դարու վերջը բոլորովին այլ նշանակութիւն ունի. քանի մը տարի յետոյ լրանում է մեր երկարատեւ սուգի ժամանակն և ինչպէս Հայ ազգի չորս հազարամեակն այդտեղ է լրանում. Հայ ազգի առաջին պսակադիր թագաւորի 2500 ամեակն այդտեղ է ճառագայթում և ահա այդ կրկնակի վեհափառ յօբելեանն, որ սերտ կապուած է Հայ ազգի առաջին վեհագոյն ազատութեան հետ, նոյն այդ խրոխտապանծ յօբելեանն, այդ սուրբ տօնը պիտի պատուէ ընդմիշտ Լեւոն Զի մահուան սուգի 500 ամեայ քօղը . . .։

Այդ ամբողջ պատմական չրջանի հիմքն է եղել այն սուրբ խօսքը թէ «քաջաց ազգն—քաջք», որոնք սուրբ լինելով, սուրբ եւս պիտի մնան, վասն զի դորա արժանաւորն են այն գաղափարի մէջ, զոր պանծալով գոչեց Վարդան Մամիկոնեան՝ «երկիւղ Թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէջ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւղը փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց»։ Թող ուրեմն սարսափին նոքա, որոնք հաւատք չունենին, ուստի և երկիւղի մէջ են սուգած։ Աստուծով կը տօնենք Հայ ազգի 4000 ամեակը. Թող ուրեմն դոյան նոքա, որոնք անցեալ չունեն, ազգ ուրեմն չեն կարող և ապագայ ունենալ։

ՕՆԱՆԴՐ

ՏԵՂԱԿԱՆ

Անցեալ երկուշաբթի (մայիս 20/1 յունիս) գիշերը Մարսէյլի հայ գաղթականութեան տարեկան Ընդհանուր ժողովը եղաւ։ Հոգաբարձութեան տարեկան տեղեկագիրը և հաշուեկշիռը կարդացուեցան, որով կը տեսնուէր թէ այս տարի մատուռը 3500 ֆրանքի մօտ գումար մը արտակարգ ծախքեր ունեցեր է, թէ՛ Հոգեւոր Հովուի փոփոխութեանն և թէ՛ նոր կահ կարասիների գնման պատճառով։

(1) 606+1891+2=2499, ուրեմն =2500՝ 1893 թուին։

Ապա ժողովը Տիար Կ. Հալաճեանի առաջարկութեամբ ընթացիկ տարւան ելմտացոյցին համար նոյն իսկ նըստին մէջ հանգանակութիւն մը սկսեց որի սկզբնական յաջող արդիւնքէն դատելով, կարելի է ապահովուած համարել, այս տարուան համար նախատեսուած սովորական ծախքերի պէտք եղած գումարը։

Գաղթականութեան համար սեփական եկեղեցի մ'ունենալու մասին Պատուհոգաբարձութեան առաջարկն սկզբնապէս ընդունուեցաւ և 6 անձէ բաղկացած մասնաժողով մ'ալ ընտրուեցաւ որ այդ մասին ծրագիր մը պատրաստելով Ընդհ. ժողովին ներկայացունէ, որ եթէ գործնական համարի ծրագրին եզրակացութիւնը, դարձեալ նոյն մասնաժողովին միջոցով շինութեան ձեռնարկն սկսել տայ։

Ժողովը իր վերջին օրակարգին անցնելով, հրաժարուող Հոգաբարձութիւնը վերընտրեց անդամներին ամբողջութեամբը։

ԱԻՏՐԱԼԻԱ
ԵՒ
ԱԻՏՐԱԼԻՈՑ ՀԱՑԵՐՆ

Մէլպուրն, 1 ապրիլ 1891

(Շար. 77րդ թուհն եւ վերջ)

Մէլպուրնի մէջ վերոյիշեալ Հայոցմէ զատ Հայ չկայ։

Գալով Սիտնէյի Հայոց, նոքա ալ թուով չատ քիչ են։ Բայց նոյն իսկ սոյն քիչ թուովն հանդերձ, Հայուն կարծես թէ բնական դարձած մոլութիւնն, մատնութիւնն, ի գործ դրուած է Հայէ ի Հայ։ Սիտնէյի Հայոցմէ երկուքն, Պր. Կ. Գ. և Պր. Ս., յանդգնութիւն կունեցան գողցուած թղթադրամ ծախու առնել տղայմէ, և այս իրենց մեծ չհու ճամբայ մը կը բանայ քիչ առեւի մէջ։ Բայց Զմիւռնիայի Բովանդ անուն ազգատեաց Հայ մը, ուրիշ Հայ մ'ալ իրեն գործակից ընելով, կերթայ վերոյիշեալ երկու Հայերն մատնել քաղաքական իշխանութեան, միայն փոխարէն թղթատարատան դէմն գըտնուղ աւերակին մէկ անկիւնն վեց ամսու չափ անվարձ պտուղ ծախելու իրաւանց համաեստ (!) վարձատրութեանն համար։ Թէեւ սոյն երկու պարոնայց արարքն այ մենք չենք արդարացուներ, դի անգլիական օրէնքն, գողցողն ու գողցուածը գնողն համահաւասարապէս դատապարտելով, սոյն պարոնայք պարտ էին ղողջ կենալ այդպիսի վերտանգաւոր առաւտուր մէջ գտնուելէ, բայց և այնպէս սոյն Զմիւռնիայցւոյն մատնութիւնն երբեք չարդարանար երբ մատածենք թէ օտար երկրի մը մէջ մի քանի Հայք իրար պաշտպանել պարտին։ Այլընդհակառակն յիշեալ երկու պարոնայք, Հայու մը չնորհիւ, 3 ամսուան բանտարկութեան դատապարտուեցան, գրեթէ 3 տարի առաջ։ Պր. Գ.՝ Երեւանցի Մահտեսի Մ. անուամբ Հայ երիտասարդի մը հետ բաւական տաեն պաղպաղակի առեւտրոմբ զբաղելէ յետոյ, անցեալ տարի մեկնեցաւ Ամերիկա, սոյն Երեւանցի Հայուն հետ ի միասին։

Սիտնէյի մէջ երկու հաղտատցի Հայեր ալ կան, կըսուի. բայց զնոսա ես ճանչնալու կամ տեսնելու բաղդն ունեցած չենք։ Կայ ուրիշ Հայ մ'ալ, Մշեցի, Պր. Մկրտիչ Աւագեան, որ 12–15 տարի է Աւստրալիոյ մէջ կը գըտնուի և շոգենաւուց մէջ երրորդական մեքենագործութեան պաշտօնն կը վարէ։ Ի Սիտնէյ երկու մահմետական թիւրք կան, որոց մին Աւստրիացի ամուրի կնոջ մը հետ ամուսնացած է և երկուքն ալ ձկնավաճառութեամբ կը զբաղին։ Ուրիշ Հայ մ'ալ կայ Աւստրալիոյ Պրիղպէնն ըսուած քաղաքն, Արապկիրցի Պր. Միսակ Պարսամեան, որ 6 տարի է Աւստրալիա կը գտնուի։ Զարաչար աշխատող և բաւականի ազգասէր մի երիտասարդ է և իր ազգայնոց ըստ կարողութեան օգնած է։ Բայց դժբեմ բաղդն միշտ ծանրանալով իր գլխուն, վտանգներու և արկածից փոսի մը մէջ գահավիժելով իր փայլուն վիճակն կը կորնցուներ, և արդեւս հիւանդութենէ նոր ազատած, աշխարհի հետ մաքառելու կը պատրաստուի։

Մինչև հիմա այնպէս գիտէինք թէ Աւստրալիա Հայու թերթ ըլլալով միայն Արմենիան է որ կանոնաւորապէս կը գայ, բայց զարմանքնիս չի կրցինք բռնել երբ տեսանք Պր. Միսակի քով երկու տարւան Արեւելքներ որք կարծես թղթէ բլրակ մը ձեւացուցած էին։ Այսչափ հեռու երկիր մը, հայերէն լեզուաւ պրագիր մը ընթեռնլու և հայերէն նամակներն ընդունելու ուրախութեան արժէքն հայ պանդուխտն ուրչա՛փ կը գնահատէ։ Սորա ճիշդ գնահատութիւնն ղգալու համար պանդուխտ մը ըլլալ պէտք է։

Սիտնէյի և Պրիղպէնի մէջ քանի մը վախճանող Հայոց վրայ կը պրուցուի. բայց վստահելի տեղեկութիւնք չունենալով, առայժմ զանց կընենք խօսիլ ազնց վրայ։ Ահա ամբողջ Աւստրալիոյ Հայոց խմբակը որ 16է անդին չանցնիր։

Մենք չեմք քաջալերեր Հայ գործաւոր գան դէպի այտեղ գաղթել, վասն զի առանց դրամագլխի և լեզուագիտութեան քաղքիս մէջ օտարականի մը համար չարաչար նեղութիւն կրելու հարկը ակներեւ, բայց յաջողին՝ խիստ հազուագիւտ բան մ'է։ Անարուեստ, անպաշտպան, անդրամ, անլեզու Հայը չնչին գումարի մը փոխարէն օտարին համար իւր ապրուստին սիրոյն 18 ժամ չան պէս չարաչար աշխատելէ ի զատ ոչինչ կարէ ընել։ Բայց գալով այն Հայ մեծատանց, որք ըստ բաւականի ծանօթ են ամ առածին թէ «Դրամն դրամ յառաջ բերէ», այդպիսիք կրնան իրենց վաճառականական գործառնութիւնն դէպ այս կողմերն աշխարհի ևս տարածելու։ Մեծագլուխ դրամատէրջ վաճառականական ասպարէզին մէջ ունեցած մեծ ձեռնհասութիւնք չունենալով, կրնանք յուսալ թէ Հայ հարուստք, որք կը փափաքին իրենց գործառնութեանց ընդարձակման, հարաւային կիսագնդիս այս մասին մէջ ևս իրենց բաղդն փորձել կըրնան եթէ յարմարութիւններ կը տեսնեն. յուսալի է որ եթէ բանական եղանակաւ սկսին իրենց նպատակ, ո՛չ միայն իրենք կրնան օգտիլ սոյն երկրիս ճոխ հողէն. այլ թէ այն գործառնորք, որք հոս գալով օտարին համար կը փոտին, հաճոյիւք պիտի ծառայեն իրենց ազգակցաց։

. . . խմբագիր Տէր, անկէ ի վեր որ լսած եմ ձեր համակրելի թերթին միջոցաւ «Հայոց Հայրենասիրական Միութեան» կազմուիլը, կարծես սիրտս, հոգիս ալ նոր յուսալից հրով մը բորբոքած է։ Թէև այսչափ հեռի ի հայրենեաց, բայց իր անղուսպ սէրն կարծես հեռաւորութեան մղոններուն կը յաղթէ և «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ն կը մերձեցնէ հայրենասէր սիրտ մը հայրենեաց եղերաց։

Նուաստս, դպրոցական ասպարէզէ իսկ ազգային սիրով վառուած լինելով, թէև յանդուգն ձեռնարկութեանց մէջ իսկ ձգած եմ զիս պարագայից պահանջմանց համեմատ, բայց դժբաղդաբար ամեն կազմակերպութեանց մէջ նախանձն, ինքնասիրութիւնն, մատնութիւնն ու վհատութիւնն՝ տիրապետող մի զօրութիւն գտած եմ, վասն որոյ նոյն իսկ ներկայիս երբ կը լսեմ հայրենասիրական ընկերութեան մը կազմակերպութիւնն, պահ մը ինձ անհաւատալի կը թուի թէ իրա՞ւ է որ «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ն միւս հայկական ընկերութեանց անունման, անկեղծ ու անձնուէր լեզէոն մը պիտի լինի, իրա՞ւ է որ, կըսեմ, հասութիւնն, շահախնդրութիւնն, նախանձն ու մատնութիւնն Հայոց ընկերութեանց համար այլ եւս մեռած տառեր պիտի լինին, մանաւանդ այսպիսի հայրենասիրական սրբազան Միութեան մը համար։ Ա՛հ, թէև ընտանեզուրկ մի դժբաղդ երիտասարդ, թէև, կասեմ, դժբաղդութեան կոհակաց մէջ տատանող մի հիւլէ եմ, բայց և այնպէս անկեղծ ըղձիւք լցուած մի անհատ եմ, պատրաստ ի նուիրել միշտ իմ կեանքն ու երիտասարդութիւնն, սիրտս ու հոգիս, նոյն իսկ իմ վերջին շնչեակ, ի սէր և ի պոհ մեր սրբազան նպատակին։ Գուցէ չափազանցութիւն համարիք այս տողեր. բայց, ոչ, խնդրե՛մ, յիշեցէք թէ երբ դժացուածներ ողողած են սիրտ մը, եր՛բ յուզման արտասուք կսկսին թափիլ գրողին թղթին վրայ, այդ արտասուաց մէջ կայ անկեղծութեան մի հեղուկ որ կը բղխի ուղղակի սրտի խորէն. և ի՞նչ կայ ըզգացման աւելի բնական մի տեղ քան սրտին խորը։

Փորթուգալեան անուան՝ որուն անկեղծօրէն կը վստահիմ, այդ Միութեան նախագահ լինելն մեծ գրաւական մ'է թէ այդ Միութիւն ազատամիտ և հայրենանուէր ընկերութիւն մ'է և ահա սոյն մեծ հաւատին է որ նուաստս գրգռեց միանալ Պր. Տիգրանի ջանից և այցելել մի քանի հայ գաղթականաց որք ի Մէլպուրն և դուստր մը հաւաքել՝ նուիրելու համար «Հայոց Հայրենասիրական Միութեան»։ այսու կատարելով այն պարտականութիւնն զոր Աւստրալիոյ Հայք ևս ունին, ի մաի բերելով թէ «Հայոց Հայրենասիրական Միութեան» օգնել ըսելն Մայր Հայաստանի արտասուքը սրբելու պատրաստուիլ ըսել է։ Ի ներքոյ թղթակցութեանս պիտի գտնէք նուիրատու անձանց անուանց և իրենց նուիրաց ցանկն(1) զոր անշուշտ եմ որ պիտի հրատարակէք ի շարս նոցա որք նոյնպէս օգնող են սոյն Միութեան։

Առ այժմ այսչափս բաւ համարելով, նախ ներողութիւն կը խնդրեմ նամակիս երկարութեան և այն սխալանաց համար որք յակամայից սպրդած են։ Ձեր թերթն գրական ազատութիւնն կը քաջալերէ և կը խրախուսէ այն ամեն գրիչներն որք թէև յառաջուց տկար, բայց ազգային սուր ու բեղմնաւոր լինելու ակնկալութիւն մը կուներան։ Երկրորդ՝ «Հայոց Հայրենասիրական Միութեան» մէն մի անդամոց նոր եռանդ, նոր հուր և նոր սէր կը մաղթեմ, կը մաղթեմ որ Միութիւն, Սէր ուաձկարտութիւն իրենց միակ կէտ նպատակն լինին։ Եւ արդարեւ, ի՞նչ չէ կարող ընել մեր «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ն եթէ տիրացած լինի սոյն երեք մեծ զօրութեանց որով կանգնին միայն անկեալ սիրտեր, կորսուած ոգիք և ազգ որք բարբարոսութեան լախտին ներքեւ կը հեծեծեն։ Նոցա գրչաց Աննիպալեան ճակատ ու կորով կը մաղթեմ և կը քաջալերեմ այն վառ գրիչք որք Աննիպալ, Փայլակ, Շաւարշ և այլն անուանց ներքեւ ծածկուած են։ Մանաւանդ Աննիպալն, որոյ գրիչն մարգածին ոգի, անսիրտին սիրտ ու խանդ և թմբրեալ բազկաց ալ ոյժ ու զօրութիւն կը տայ։ Ի վերջոյ Արմենիա ազատախօս թերթին յարատեւ յաջողութիւն և հայրենասիրական վառ ու բորբոքիչ ներշնչմունք կը հայցեմ անխափան։ Որպէս զի այդ թերթի իրբեւ յեղափոխական գրչակ մը, ոգեւորող խելացի վերստուգութիւններ վրան բացուած, ծածանի միշտ հայկական մէն մի խաւերուն մէջ և մարած սրտերն նոր հոգւով մը լնու և վառեալներն ալ աներկիւղ պահելով կարենայ մի օր մղել դէպի պատերազմի դաշտը։

Եւ մեզ Աւստրալիոյ ցիրուցան Հայոցս յոյս, սէր ու միութիւն չռայլէ իրրեւ միակ ուղի անսխալ ընթանալու համար Մայր-Հայաստանի փրկութեան մեծ գործին մէջ։

ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻ

(1) Այդ ցանկ կը հրատարակուի «Հայոց Հայրենասիրական Միութեան» նուիրատուութիւնների չարքին մէջ յառաջիկայ թուով։ ԽՄԲ.

ԹԻՒՐՔԻԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն մայիս 29 թուով կը հեռագրեն. «Ֆրանսական մի ընկերութիւն դեռ նոր ձեռնարկած էր Եգիպտա-Երուսաղէմի երկաթուղու շինութեանը, երբ Անգլիացիներն ալ մտածեցին ուրիշ գիծ մը հաստատել Եգիպտէն Դամասկոս։ Այս մասին արդէն արտօնութիւն ձեռք բերուած է ժամանակէ մ'ի վեր և երկրաչափները սկսած են ուղեգծի պատրաստութեանն։ Գիծը Քաիֆֆա կոչուած բանական ապահով նաւահայքէ մը պիտի

ժկինի և Լիբանանէն անցնելով, նոքա ամենէն ցած մասերէն, Դամասկոս պիտի հասնի. այսպիսով ծովեզերքը երկրին ամենէն բանուկ առեւտրական կեդրոններէն մէկին հետ պիտի միանայ։»

ՌՈՒՄԻՈՒ ԵՒ Բ. ԴՈՒՌԸ

Եւրոպական լրագիրներուն մէջ հետեւեալը կը կարդանք.

«Ռուս նաւերուն վոսփորէն անցնելու մասին պատահած միջադէպը երկու կողմերուն համար ալ նպաստաւոր կերպով վերջացած է։ Ռուսական արքունիքը որ առաջ կուզեր Դէորգ Մեծ Դուքսի ճանապարհորդութեան ուղեգիծը փոփոխել, այժմ կրկին իր նախկին որոշման դարձեր է, կարդադրելով որ Մեծ Դուքսը Կ. Պոլսէն անցնի, Ռուսիա վերադառնալու համար։ Բնականապէս այդպիսի հիւրի մը այցելութիւնը դանազան պաշտօնական ձեւակերպութիւններ և արարողութիւններ կը պահանջէ, որոնք դիւրին չեն կարդադրուիր։ Կը կարծուի թէ անցեալ հինգշաբթի օր ռուս դեսպան Գ. Նէլիւօֆի և Բեամիլ փաշաի տեսակցութիւնը այս փափուկ խնդրի մասին տեղի ունեցած է։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Պերլին, 29 մայիս. Ռուսիաէն եկած կառախումբերը ամեն օր հարիւրաւոր Հրեաներ կը բերեն որոնք արտաքսուած են Ռուսիաէն. ազնց մեծ մասը վերջին ծայր թշուառութեան մէջ է. երեկ 1600 հոգի հասան ազնցմէ և կայարանի մէջ ընդունուեցան իրենց ալման հաւատակիցներէ որոնք իրենց ուտելիք, հագուստ և փիչ մ'ալ դրամ բաշխեցին։ Այս թշուառներին ուղեւորութեան ձրի տոմսակներ ալ կը տրուին Լոնտոնի և Նիւ Եորքի համար, միայն թէ կը վախցուի որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը, իր նոր օրէնքներու համաձայն, ազնց ցամաք երթելը արգիլէ։

— Վիէննա, 29 մայիս. Բոլորովին կը հաստատուի այն լուրը թէ Պերլինի, Վիէննայի և Հռովմի դահլիճները աղէն համաձայնութեան եկած են երից Դաշնակցութիւնը նորոգելու համար։

Այս մասին Վիէննայի և Պերլինի մէջ եղած հերքումներն ուրիշ բան չեն եթէ ոչ իտալական կառավարութեան մի գարձուած, որով սա կուզէ միտքերը պատրաստել ի Ֆրանսա և Իտալիա։ Այնպէս որ յետոյ կատարուած իրողութիւնը ներկայացնելով, դիւրագգածութիւնների մեկէն մեկ գրգռութեան առաջքն առնէ։

— Լոնտոն, 29 մայիս. Էնգլիւէնձան կը շարունակէ սաստկութեամբ ճարակիլ. Հինգշաբթի 4րդ վաչտին մէջ 102 հիւանդներ կան, Պրմինկէմի բժիշկներէն ալ շատեր զոհ գնացեր են, էնգլիւէնձան անոնցմէ ալ ուժ հոգի գերեզման ղրկեր է։

— Պերլին, 29 մայիս. Իրարեկ չըբջանները եղած մի լուրի նայելով, Զաբըը որոշած կը լինի երթալ Մասկուա բը-

նակիլ մի տարի և ադով քիչ քիչ Պետերբուրգը մայրաքաղաք լինելէ դադ ըեցուներ ։ Եթէ իրաւ է այս լուր, իսկ. դերը քաղաքական մեծ կարեւորու. թիւն մ'ունի , զի այդ փոփոխութիւն կը ցուցնէ թէ Ռուսիոի մէջ հին կու. սակցութիւնը վերջնապէս յաղթանակ կը տանի ։

— Պետերբուրգ , 31 մայիս. «Քո. րէսբօնտանս Ռիւս»ը կը կարծէ գիտ. նալ թէ Զարը նոր հրամանագիր մը ըս. տորագրեր է որի համեմատ 43 տարե. կանէն վար գտնուող և գէնք կրել կա. րող ամեն անձ տրամադրելի պիտի լինի զինուորական ծառայութեան հա. մար ։ Այս նոր օրէնքի կարգադրու. թիւններին համեմատ վերակազմուած ռուս բանակը եւրոպական ոեւէ պե. տութեան բանակէն երեք անգամ ա. ւելի զօրաւոր պիտի լինի ։

— Անգլիացէն հասած լուր մը հե. տեւեալ դէպքը կը հաղորդէ. «Նիւեօրք բնակող սեւամորթ մը ժամանակէ մ'ի վերվաչինկթըն կը գտնուէր. իր բարե. կամներ ուղեւով իրեն մի սեղան տալ , Լիզի Հիւկ անուն սեւի մը գիմեցին որ հիւրանոց մը կը բանեցուներ ։

Ճաշը սքանչելի անցաւ , խորտիկ. ներէն մին մատուցող իր համով հիւ. րերին զարմանքը գրաւեց , այնպէս որ ագոնցմէ մին ուզեց տեղեկանալ թէ ինչպէս պատրաստուած էր այդ խոր. տիկ . Լիզիի տպայներէն մին պատաս. խանեց թէ քրոջս միսէն պատրաստ. ած էր ։ Սեւամորթներն այս պատաս. խանին վրայ բոլորովին սարսռելով , անմիջապէս ոստիկանութեան լուր տր. ւին ։ Տեղի ունեցած խուզարկութիւնը չուտով կրցաւ երեւան հանել իրողու. թիւնը , ճաշին ճաշակողները քննելով ։ Թշուառական ճաշարանապետը իր աղ. ջիկներէն մին մորթած էր, ի սպաս հիւ. րերին ։ Ինք ձերբակալուեցաւ , կը վախցուի թէ ժողովուրդը ղինք պիտի լինչէ ։»

— Պետերբուրգ , 1 յունիս . Վեր. ջերս ոստիկանութիւնը հետքեր գը. տաւ մի գաղտնի միութեան որ կազ. մուած է Պետերբուրգի , Մոսկվայի , Քիեվի , Խարքովի , Օտէսայի և Քա. զանի յեղափոխական ուսանողներէ ։ Այս յայտնութիւն կապացուցանէ թէ յիշեալ քաղաքներուն մէջ գրեթէ միև. նոյն ժամանակ եղած յեղափոխական շարժումներն միատնական և համե. րաչխ գործունէութեամբ առաջ տար. ւած էին ։ Խուզարկութեան ժամանակ մի չատ վտանգաւոր թուղթեր և յե. ղափոխական գրուածներ բռնուած են յիշեալ քաղաքներուն մէջ բազմաթիւ անձերի քով ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով ։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք ղրկուիր ։

Ա. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իր աղա. տութիւն ձեռք բերելու համար մեկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է ։) (1 ֆր. 10 սթմ.) 1 ֆր. 50 սթմ.

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաս. տանցիների պանդխտութեան տխուր հետեւանքների մեկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով ։) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենից առարտեւ. լուն (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ո. ստանաւորներէն 3ը՝ առանձին տետ. րակով հրատարակուած են) ։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ , հատը (5 սնթմ.) 10 սանթիմ ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Վ Ր Է Ժ

Թարգմանեց ռուսերէնից
Ա. Ս.

Ինչ որ այսօր Թիւրքերն կանեն Հայաստանի մէջ և անել կուսան Քիւր. դերին , նոյնը և աւելին կանէին նաև Պուլկարիայի մէջ մինչև որ Պուլկարներն ապատուեցան այդ բարբարոսների լու. ծէն և ունեցան իրենց ազգային կա. ռավարութիւն ։ Թրքական բռնաբա. րութիւնների մեկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ Վրէժը որ ցոյց կու. տայ նաև թէ Պուլկարներն այն աս. տիճան նեղուած էին քաղաքների և գիւղերի մէջ որ յանձն կառնէին մինչև իսկ լեռներն քաշուելով ապրիլ և յար. մար առիթն ներկայացած ժամանակ իրենց վրէժ լուծել Թիւրքերէն ։

Վրէժի գինն է 20 սնթմ. (15 սնթմ.)։

ԺԱ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՍ

(Ցուհական պատմուբիւնից)

ԳՐԵՑ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

Ակէ գրեթէ 5 դար յառաջ երբ Թիւրքերն տիրապետած էին յունա. կան Սիրա կղզուն , իրենց սովորութեան համեմատ ամեն չարիք կը հասցուներին Յոյներին , ծանր տուրքերով կը նեղա. ցունէին , անոնց ստացուածները կը կո. ղոպտէին , կիներն ու աղջիկները կը բռնաբարէին ևայլն ։ Թոմաս Բոյարիս անուն մի նաւավար և ձկնորս , մի աղ. քատիկ պատանի որ սակայն հարուստ էր աղնիւ զգացումներով, կղզուն մահ. մէտական կառավարչին իւր քրոջ ա. ռեւանգուելուն համար գրգռուած , ոգեւորուած , կը յաջողի ինք եւս գրգ. ռել Սիրայի արդէն դժգոհ յոյն ժողո. վուրդը որոնք կը յարձակին կառավար. չի պալատին վրայ , կը լինչեն Թիւրք չարագործները և օդուտ քաղելով Թիւրք կառավարութեան այն ժամա. նակի խառնաչփոթ դրութենէն , ա. պատամբութիւն կը հրատարակեն , մի քանի կռիւներ կունենան իրենց վրայ ղրկուած Թիւրք զօրքերին հետ որոնց կը յաջողին յաղթել Թոմաս Բոյարիսի առաջնորդութեամբը և Բոյարիս ժողո. վրդի հաճութեամբը կը հրատարակուի կառավարիչ Սիրայի ։

Գին (15 սանթիմ) 20 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼԻՃԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր օրդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ ։ Գին 1 ֆրանգ , (75 սանթիմ)։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերէն վրայ մանաւոր ղեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին հա. մար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը ։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ԲԱՌԳԻՐՔ ԳԱՂՂԻԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷՆ

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
ԵՒ
ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

Պատկերազարդ տպագրութիւն

Ընտիր Թղթի վրայ , մեր ձաւրաս. պէս 1300 ձեւերով, մեծադիր քառա. ծալ , մօտ 300 Թերթերէ բաղկացեալ ի վերջ երկրորդ Հատորին՝ յաւելուած Հայերէն–Գաղղիերէն Բառագրոց ։

ԳԼՈՒԽ ԴՈՐՏՈՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՊՐՊՊ.Ի ՔԱՋՈՒՆՈՒՈՑ

Լոյս տեսած է Առաջին Հատորն ։ 150 Թերթ , 627 գեղեցիկ ձեւերով ։

Բացուած է բաժանորդագրութիւն երկու Հատորին ի միասին ։

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Կանխիկ վճարումն բաժանորդագնոյ երկու հատորին ի միասին ։

Բ. Բաժանորդագինն է 50 ֆր. ։

Գ. Բաժանորդագրութիւնն կը շա. րունակուի մինչեւ ցվերջ 1891 տարեյոյ ։

Դ. Բաժանորդագրութեան պայմա. նաժամն աւարտելէ յետոյ՝ գինը պիտի բարձրանայ ։

Ե. Բաժանորդագրուողք պիտի ըն. դունին անդորրագիր գրամոց ստաց. ման մասին ի վարչութենէ Տպագրա. տան Մխիթարեան Պատ. Միաբանու. թեան վենետկոյ ։

Զ. Բաժանորդագրուողք պիտի ըն. դունին Առաջին Հատորն անդորրա. գրին հետ ի միասին . իսկ Երկրորդ Հա. տորն՝ այն ինչ տպագրութիւնն աւարտի

Այս կարեւոր գործին բաժնորդա. գրուիլ ցանկացողները կարող են դիմել նաեւ Մարսէյլ Արմենիայի խմբագիր. անօրէն Մ. Փորթուգալեանին որ այդ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔԻ բաժնորդագրութեան գործակալ կար. գուած է ։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Բաֆֆի, Դաւիթ բէկ պատմական վէպ (1722–1728) Ա, Բ և Գ գիրքերն վեր. ջաբանով մէկտեղ մէկ հատորի մէջ ամ. փոփուած. Բ տիպ։ 10 ֆր. ։

Բաֆֆի , Խենթը (Արկածները վերջին ռուս–Թուրքական պատերազմից) և Զալալիտտին (Մի պատկեր նրա աշ. խատանքից) · երկուքը մէկտեղ մէկ հա. տորի մէջ ամփոփուած. Բ տիպ։ 8 ֆր. 75 ս.

Բաֆֆի , Հայ կինը եւ Հայ երիտասար. դութիւնը 5 ֆր. 25 սնթմ.,

Բաֆֆի, կայծերի վերջը 1 ֆ. 75 սթմ.

Ծերենց , Թէոդորոս Ռշտունի 3 գիրք. 50 սանթիմ

Հ. Առաքելեանց , Պատմութիւն Խա. չակրութեանց և Թագաւորութեան Ե. րուսաղիմայ 2 ֆրանգ

Նիկոլ կամ դարձ Հայոց Եւրոպիոյ ի կաթոլիկութիւն 1 ֆր.

Զայնագրեալ երգեցողութիւն Ս. Պա. տարագի 10 ֆր.

Երգնկեանց, Ազգային երգարան (Զայ. նագրեալ հայկական նոտաներով) 2 ֆր. 80 սանթիմ

Շարժումն Հայաստանի (L'Arménie en mouvement). Մայր Հայաստանի պատկեր 1 ֆրանգ

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. — Յուշիկք Հայրենեաց Հայոց (Հայրենասիրութեան վրայ չերմ եռանդով գրուած մի նախարանէ յե. տոյ , Հայաստանի բնախօսութեան վե. րաբերեալ հմտալից և ընդարձակ տե. ղեկութիւններ կան գրուած : Այնու. հետեւ , Հայոց Պատմութենէն առնուած մի քանի անձերի և հետաքրքրական նիւթերի վրայ առանձին առանձին գրը. ւածներ կան մանրամասն և ընդարձակ տեղեկութիւններով որոնք բազմա. թիւ տպագրուած և գեղ անտիպ պատ. մական գիրքերէ քաղած և ամփոփած է Հ. Ալիշան այս գրքի մէջ , իրեն յա. տուկ գրաւիչ և բանաստեղծական ո. ճով պատմելով դանոնք : Գրուած է աշ. խարհաբար լեզուով · կը բաղկանայ 2 հատորէ և ունի 6 պատկեր) ։ 11 ֆր. ։

ՀԱՅ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՔ

1878ին Պէռլին գնացած Հայ պատ. ուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ Թղթի վրայ առնուած և պատուի. րակների անուններն Հայերէն և ֆը. րանսերէն տառերով միանգամայն տը. պագրուած , կը ծախուի Արմենիայի խմբագրատունը ։ Գինն է 1 ֆրանգ , փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.